**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

**2024թ. ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ**

**Համայնքի անվանումը՝ Մասիս**

| **Գործընթացի փուլերը** | **Իրականացված գործողությունները*** *Նկարագրել յուրաքանչյուր փուլին համապատասխան իրականացված գործողությունները: Իրականացված գործողությունների վերաբերյալ, եթե՞ կան համացանցային հրապարակումներ (կայքում, ֆեյսբուքում և այլն), խնդրում ենք նշել հղումները* |
|---|---|
| Նախապատրաստական փուլ (նշել նաև համայնքի բյուջեից հատկացված գումարի չափը) | Մասիս համայնքի ավագանու 2024թ փետրվարի 1-ի թիվ 02-Ն որոշմամբ համայնքում սկիզբ է դրվել մասնակցային բյուջետավորման գործընթացին, որի կատարումն ապահովելու համար համայնքի ղեկավարի 2024թ փետրվարի 22-ի թիվ 1466-Ա որոշմամբ ստեղծվել է գործընթացի կառավարման հանձնաժողով, հաստատվել են հանձնաժողովի իրավասությունները, գործընթացի իրականացման ընթացակարգերը, չափանիշներն ու ձևաթղթերը: Հաստատվել են միջոցառումների իրականացման ժամանակացույցը: https://masiscity.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=968dc672-20b5-48d0-b0b6-a07965ad0003 https://masiscity.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=c4915069-3231-45ce-8a65-a06e64f87bc1 |
| Իրազեկման փուլ | Իրազեկման փուլը տևել է ս/թ փետրվարի 26-ից մինչև մարտի 11-ը: Համայնքապետարանում և բնակավայրերի վարչական նստավայրերում անցկացվել են ժողովներ համայնքի բնակչության հետ, ծրագրի մասին մանրամասն տեղեկացնելու համար, հայտարարություններ են փակցվել թե համայնքապետարանում թե բնակավայրերում: Համայնքապետարանի պաշտոնական էջով և ֆեյսբուկյան էջով պաշտոնական հայտարարություն է տեղադրվել մասնակցային բյուջետավորման գործընթացի վերաբերյալ: |
| Առաջարկների ներկայացման փուլ | Առաջարկների ներկայացման փուլը տևել է ս/թ-ի մարտի 12-ից մինչև ապրիլի 12-ը: Ներկայացվել էին 9 առաջարկներ: Ներկայացված առաջարկները ամփոփվել են ս/թ-ի ապրիլի 15-ից մինչև ապրիլի 22-ը: |

| | |
|---|---|
| | https://masiscity.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&tv=-4&g=f62d921f-8515-42d2-9af6-9ae7d7fa9c8d |
| Առաջարկների նախնական գնահատման փուլ<br>(նշել նաև այս փուլում ընտրված ծրագրերի քանակը) | Առաջարկների նախնական գնահատման փուլը տևել է ս/թ-ի ապրիլի 23-ից մինչև մայիսի 5-ը:<br>Գնահատման փուլի արդյունքում 2 առաջարկ չի բավարարել մասնակցային բյուջետավորման գործընթացի պահանջները, մասնավորապես<br>• Առաջարկը վերաբերվել է պետական սեփականություն հանդիսացող տարածքին<br>• Առաջարկի բյուջեն մի քանի անգամ գերազանցել է համայնքի ավագանիով սահմանված գումարը:<br>https://masiscity.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&tv=-4&g=f62d921f-8515-42d2-9af6-9ae7d7fa9c8d |
| Քվեարկության փուլ<br>(նշել նաև քվերակության մասնակցած ընդհանուր բնակիչների թիվը և յուրաքանչյուր ծրագր օգտին ստացված ձայների քանակը) | Քվերակության փուլը տևել է ս/թ-ի մայիսի 7-ից մինչև մայիսի 14-ը, որի արդյունքում ստացվել է հետևյալ պատկերը՝<br>• Մարինա Գևորգյան- Բարենորոգում հանուն երեխաների /Մասիս քաղաքի ՄՊՍԿ բակի բարեկարգում/ -2081 ձայն<br>• Անի Գևորգյան-Այնթապ բնակավայրի մսուր մանկապարտեզի հարակից տարածքի բարեկարգում – 1500 ձայն<br>• Քրիստինե Մարտիրոսյան-Ղուկասավան բնակավայրի կենտրոնական այգու /հուշահամալիրի տարածք/ կանաչապատում և բարեկարգում-1111 ձայն<br>• Լիլիթ Խոդեդանյան-Դարակերտ բնակավայրում խաղահրապարակի կառուցում-561 ձայն<br>• Հակոբ Հարությունյան-Ջրահովիտ բնակավայրում մինի ֆուտբոլի դաշտի կառուցում- 361 ձայն<br>• Լիլի Բաղդասարյան-Ժամանցի կենտրոն Սիփանիկ բնակավայրում – 243 ձայն<br>• Արևիկ Խաչատրյան-Դաշտավան բնակավայրի հանդիսությունների սրահի նորոգում – 174 ձայն |

| | |
|---|---|
| | **Հաղթող է ճանաչվել Մարինա Գևորգյանի - Բարենորոգում հանուն երեխաների /Մասիս քաղաքի ՄՊՍԿ բակի բարեկարգում/ առաջարկը:** |
| Իրականացման փուլ | Ձեռք են բերվել նախագծանախահաշվային փաստաթղթեր՝ Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ընթացակարգի ծածկագիրը՝ ԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-24/85<br>Հղումը՝ https://armeps.am/epps/cft/listContractDocuments.do?resourceId=10614119<br>Կատարման փուլ՝ գտնվում է նախագծման փուլում: |

Այլ

| | |
|---|---|
| Նշել մինչ այս ի հայտ եկած խնդիրները և դրանց լուծման ուղղությամբ իրականացված քայլերը | Խնդիրներ չեն եղել |
| Այլ նկատառումներ/ առաջարկություններ | |